REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 214
12 հոկտեմբերի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի հոկտեմբեր ամսվա Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճենները. / թիվ 78-Ա, 79-Ա,80-Ա , 81-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» հոկտեմբերի 2017 թվական N 78-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Արեգա Գանապետյանի և Սահակ Ասատրյանի դիմումները օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը. *որոշում եմ*

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.

Արեգա Գանապետյանին - 55 000 / հիսունհինգ հազար / դրամ,
Սահակ Ասատրյանին - 80 000 / ութսուն հազար/ դրամ,
Ընդամենը 135 000 / հարյուր երեսունհինգ հազար / դրամ:

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հոկտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 285013 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2017թվական N 79-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ԶՎԱՐՃԱՆԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ, ԲԱՂՆԻՔՆԵՐԻՆ, ԽԱՂԱՏՆԵՐԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետերով.հիմք ընդունելով << Լագգաս Հոթել >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ *որոշում եմ*

1. Անհատ ձեռներեց Գրիգոր Լյովայի Գրիգորյանին պատկանող Մայակովսկի համայնքի 1-ին փողոցի թիվ 2/6 հասցեում գտնվող << Լագգաս Հոթել >> ՍՊԸ-ի հյուրանոցային համալիրին 2017 թվականի համար տալ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն :
2. Պարտավորեցնել Գրիգոր Գրիգորյանին , մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2017թ.հոկտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» հոկտեմբերի 2017թվական N 80-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լևոն Աշոտի Վարդանյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 14-րդ փողոցի թիվ 11 հասցեի բնակավայրի կառուցապատման հողամասում՝ ծածկագիր 07-043-0052-0021 (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 740771, քարտեզագրողի,գեոդեզիստի,չափագրողի հողաշինարարի որակավորում ունեցող ԱՁ «Տիգրան Փոթիկյան»-ի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 7-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները: Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և ԱՁ «Տիգրան Փոթիկյան»-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Լևոն Աշոտի Վարդանյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի 14-րդ փողոցի թիվ 11 հասցեի բնակավայրի հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցել է շինություններ՝երկհարկանի բնակելի տուն 325.81 քառ.մետր, աստիճան՝ 10.03 քառ.մետր, հարթակ՝ 159.52 քառ.մետր, ծածկոց՝ 21.76 քառ.մետր,նկուղ՝ 6.58քառ.մետր, պարիսպ 26.29 քառ.մետր, ընդամենը շինություններ՝ 549.99 քառ.մետր մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Լևոն Աշոտի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 14-րդ փողոցի թիվ 11 հասցեի բնակավայրի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ սահմանելու իրավունք,

որոշում եմ.

1. Լևոն Աշոտի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 14-րդ փողոցի թիվ 11 հասցեի բնակավայրի կառուցապատման հողամասում ինքնակամ

կառուցված 549.99 քառ. մետր շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 966.667 (ինը հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հոկտեմբերի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> հոկտեմբերի 2017 թվական N 81-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24- Ի N 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 9- ի N 01/18.1/6441-17 հանձնարարականը , *որոշում եմ*՝

1.Մայակովսկի համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 01-Ա որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածում ավելացնել նոր կետ.

1)«11.1 Հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանության աշխատանքները ժամանակին կազմակերպմանը,չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը և առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հոկտեմբերի 11